№ 133 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21 1889 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21 № 133

ՏԱՍՆ ԵՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԱՌԱՋԻԿԱՑ 1890 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» դրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կրկին գիւղական գործիչների մասին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՐՈՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կովկասի Թուրք ժողովուրդը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՐԿԻՆ ԳԻՒՂԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

—

Վերջին ժամանակներս «Մշակի» մէջ յաճախ երևան են գալիս յօդուածներ մեր ուսումնաւարտ երիտասարդների գիւղ գնալու անհրաժեշտութեան վերաբերմամբ։

Շատ իրաւացի է այն պահանջը, որ մեր ուսումնաւարտ երիտասարդները, փոխանակ քաղաքներում խմբվելու, գիւղերը գնային գործելու։ Բայց, մեր կարծիքով, բաւական չէ այդպիսի ընդհանուր խօսքերով ասել միայն, թէ երիտասարդը պիտի գիւղում գործէ, առանց մասնաւորապէս նրա գործունէութեան եղանակի և կերպերի վրա, որովհետև գիւղական գործունէութիւնը բոլորովին տարբեր է քաղաքային գործունէութիւնից։ Քաղաքային գործիչից պահանջում են ուրիշ պայմաններ, իսկ գիւղական գործիչից—ուրիշ։ Քաղաքում խռնված են զանազան դասակարգերի մարդիկ, դասակարգեր, որոնք միմեանցից զանազանվում են թէ նիւթական և թէ մտաւոր հարստութեամբ։ Ցայտնի է, որ հէնց այդ նիւթական և մտաւոր հարստութեան տէր դասակարգերն են, որոնք կարողանում են և ընդունակ են լիակատար օգտվելու դիտութիւնների բոլոր ճիւղերից, հետևապէս ոչ և է մասնագէտ միշտ չփվելով քաղաքում այդ դասակարգերի հետ, հեշտութեամբ կարող է գործադրել իր մասնագիտութիւնը և տեսնել իր բերած աչքի ընկնող օգուտները։ Չը նայած որ այդ օգուտները գլխաւորապէս փոքրամասնութիւն կազմող հարուստ դասակարգին կը ծառայեն, այնու ամենայնիւ մասնագէտը, իր գործունէութեան արդիւնքները տեսնելով, կարող է բաւականանալ իր վիճակից։ Իսկ գիւղում, արդեօք մի և նոյն հանգամանքներն ու պայմաններն են։ Մենք հաւատացած ենք որ ոչ։ Գիւղում մասնագէտը որքան էլ ցանկանայ իր գործունէութեան համար մի սահմանափակ շրջան գտնել՝ չէ կարող։ Գիւղում չը կան դասակարգեր, այլ կայ միայն մի ռամիկ և աղքատ դասակարգ։ Կը նշանակէ, մասնագէտը պիտի գործէ ամբողջ գիւղի համար հաւասարապէս։ Այժմ տեսնենք՝ ինչ օգուտներ կարող են տալ գիւղացիներին այս կամ այն մասնագէտները։ Դիցուք թէ մի բժիշկ, զինված իր բժշկական բոլոր գիտութիւններով, գնում է գիւղ գործելու։ Ի հարկէ, ամեն մի գործիչի գլխաւոր նպատակն է տեսնել իր գործունէութեան արդիւնքները, ժողովրդին տուած օգուտները։ Եթէ նա իր գործունէութիւնը ապարդիւն տեսնի ժողովրդի համար և միայն իր սեփական շահերը աչքի առաջ ունենայ, լաւ է, որ այդպիսին բոլորովին գիւղ չը մտնի։ Այժմ տեսնենք, ինչ օգուտներ կարող է տալ գիւղացիներին մի բժիշկ, լոկ իր մասնագիտութեամբ։ Մենք գիտենք որ մեր գիւղացին (նոյն իսկ շատ քաղաքացիք էլ) թեթև հիւանդութիւնների համար բժշկի խորհուրդներին երբէք չեն դիմում։ Նոյնպէս գիտենք որ ամեն ծանր հիւանդութիւնների բժշկութեան գլխաւոր միջոցը առողջապահութիւնը, հիգիէնան է։ Կը նշանակէ գիւղացու մի ծանր հիւանդութեան ժամանակ բժիշկը անդադար պիտի կրկնէ.—«Լաւ կերակրվէք, չոր բնակարաններում ապրէք, այդ խոնաւ օրճերը ձեր տունը կը քանդեն, ոտաբոբիկ մանչ մի՛ եկէք, տաք հագնվէք, մաքրութիւն պահպանէք, պակաս աշխատէք,» և այլն և այլն։ Արդեօք այս բոլոր պատուիրանները մեր գիւղացիների համար հեշտութիւն չեն լինի, և գիւղացին մեր բժշկի վրա չի ծիծաղի, ասելով.—«աղա բժիշկ, ասածներդ լաւ երազներ են, եթէ միայն կատարվեն և եթէ ես միջոց ունենայի, առանց քո ասելու էլ, լաւ կուտէի ու լաւ կապրէի, բայց ինչ տեղից վերցնեմ այդ միջոցները։»

Այժմ խեղճ բժիշկը ինչ անի և ինչ կարող է անել իր բժշկութեամբ։ Եթէ նա միմիայն բժիշկ է և բացի բժշկութիւնից ուրիշ ոչինչ ձեռքից չէ գալիս,—պիտի թողնի գիւղը և իսկոյն փախչի։ Իսկ եթէ նա, բացի բժիշկ լինելուց և ընդհանրապէս զարգացած մարդ է, այն ժամանակ նա չի փախչի, այլ կը մտածի բոլորովին ուրիշ դարմաններ և ուրիշ միջոցներ գտնել գիւղացուն աւելի ճիշդ օգնելու համար։

Նոյն դրութեան մէջ կը լինի և իրաւաբանը, եթէ նա միմիայն իրաւաբան է։ Ինչ կարող է անել իրաւաբանը, օրինակ, այսպիսի մի դէպքում. գիւղացին աղայից կապալով հող է վերցրել. նա մի քանի տարիներ աշխատանք է գործ դրել ու ծախսեր է արել այդ հողը մշակելու, պարարտացնելու վրա, ամեն տարի էլ ճշտութեամբ վճարել է աղային իր հողի վարձը,—բայց յանկարծ մի տարի, բնական մի աղետի (երաշտ, կարկուտ, և այլն) պատճառով, գիւղացու բերքը բոլորովին ոչնչացել է և նա անկարող է հողատիրոջ վարձը վճարել։ Իսկ կամակոր աղան, դատարանի միջոցով, ուզում է գիւղացու եզներն ու գութանը ծախել տալ իր փողի համար։ Ինչ կարող է, ասում ենք, անել այս դէպքում (իսկ այսպիսի դէպքեր շատ յաճախ են պատահում) մեր իրաւաբանը։ Նա, բոլոր օրէնսդրական գրքերը քրքրելով, կը տեսնէ որ աղայի պահանջը ամենևին օրէնքի հակառակ չէ. մի և նոյն ժամանակ իր խղճին նայելով, կը տեսնէ որ հողատիրոջ վարմունքը անիրաւութիւն է, քանի որ գիւղացին իր ամբողջ ընտանիքով վերջին թշուառութեան է մատնվում։ Կրկնում ենք, ինչ կանէ իրաւաբանը։ Նա կամ պիտի գիւղից փախչի, կամ թէ չէ՝ իր մասնագիտութիւնը գրպանը պիտի դնի և ուրիշ միջոցներ ձեռնարկի....

Մի և նոյն վիճակն է [illegible] գիւղատնտեսին։ Գիւղատնտեսը, եթէ լոկ գիւղատնտես է և լաւ ծանօթ չէ քաղաքատնտեսական պայմաններին, շատ անգամ կարող է նոյն իսկ վնասել գիւղական ժողովրդի ընդհանուր շահերին։ Օրինակ, եթէ նա մի որ և է կատարելագործված երկրագործական մեքենայ բերել տայ գիւղը, այդ մեքենայի գնողը՝ մի կամ երկու ունևոր գիւղացիք միայն կարող են լինել, իսկ ընդհանրութիւնը կապում, կաշկանդում է թուրքի մէջ նրա մտքի թևերը, բացարձակապէս ճնշում է նրա մէջ ամեն ընկերվարական (social) և քաղաքացիական օրէնք, հալածում է ամեն բարեփոխում դէպի նորը, և հաստատուն է պահում հին, տասնեակ դարեր յառաջ գոյացած և ցայժմ շարունակող վիճակը։ Նա չէ հաշտվում կեանքի պարագաների այն փոփոխութիւնների հետ, որոնք բնական կերպով, անհրաժեշտօրէն առաջանում են ժամանակի թևերի վրա։ Որքան մի մարդու մէջ զօրաւոր է այս վիճակը, այնքան սեղմած է նրա միտքը, այնքան չնչին է նրա աշխարհահայեցողութիւնը, և այնքան անկարող է նա ըմբռնելու և իրագործելու հասարակական գաղափարներ, ընկերվարական օրէնք և քաղաքակրթութեան պահանջներ։

Ինչ միջոցով կարելի է յեղափոխել այս վիճակը։ Մենք դարձեալ կանխում ենք ասելու, որ ամենայն ինչ կախված է մանուկ սերնդից. ապագայում կատարվելի աջող փոփոխութեան սերմերն՝ միայն նրա մտքերում կարելի է ցանել։ Նրան պէտք է կրթել և նրանից պէտք է արդիւնք սպասել։ Սակայն ինչպէս է կրթվում նա. ինչ ոգով է սնուցանվում։ Լաւ ըմբռնելու համար այս կէտը, հարկաւոր է զէթ հարևանցի կերպով չշոշափել թուրքաց կրթարանները (?)։

Մահմեդական ուսումնարանները գտնվում են ժողլանների ձեռքում և կարգադրութեան ներքև։ Մի ողորմելի սենեակում, նստոտած են դետնի վրա, 40—50 կամ 60 աշակերտներ. դպրոցը լցված է նրանց աղաղակներով. նրանք բարձրաձայն կարդում, սերտում և գոց են անում հատուածներ... կրօնական պատմութիւնից. կրօնի դասագիրքն ամեն գրքերին փոխանակում է։ Ո՞վ չէ տեսել թուրք աշակերտներին, դասագիրքը ձեռին, նստած տեղին օրորվելով և առանձին եղանակներով կրօնական հատուածներ սերտելն և գոց անելը։ Ուսման մեծագոյն մասը կայանում է դրա մէջ։ Աշակերտը տարիներ և շատ տարիներ չարչարվում է դրա վրա և պէտք է երևակայել նրա և ծնողաց ուրախութիւնը, երբ նա յաջողում է վերջ ի վերջոյ բոլոր այդ հատուածները բերանացի սովորել և դառնում է հաֆը։ Բայց այդ հատուածները նա անկարող է հասկանալ. դասագրքի լուսանցքի վրա շեշտակի գրած մեկնութիւնները չեն օգնում նրան և նա այն ժամանակ միայն կարողանում է ինքնուրոյն հասկանալ և ըմբռնել, երբ ձեռք է առնում սարֆը և թահվը (քերականութիւն և համաձայնութիւն)։ Բայց շատ քիչերին է վերապահված հարկ եղածին չափ ճշգրտութեամբ սովորել արաբական քերականութեան նոյն իսկ տարերքը։ Էվզանի թիսայի և նասարա, եէնսուրու և այլն կշռորդութիւնների (բայերի) ախտաւոր և առողջ մասերը (որոնք բայերի գլխաւոր կրնճռոտ մասերն են) ըստ արժանոյն սովորելու համար, որքան տարիներ է գլուխ յոգնեցնում թուրք աշակերտը և դարձեալ ցանկալի արդիւնքին, այսինքն արաբական քերականութիւնը կատարելապէս սովորելուն չէ հասնում. և այս՝ ինչու համար է աշխատում.—որպէս զի կրօնական դասագրքի հատուածները կարողանայ հասկանալ։ Այս աշխատութիւնը մենք բնական ենք դտնում, նրանց համար, որոնք աւելի բարձր վիճակի են ուզում հասնել. օրինակի համար միւդէրրիս լինել, այն ժամանակ պէտք է սովորեն նաև իլմի մանթիկ—տրամաբանութիւն, իլմի քէլամ—աստուածաբանութիւն, իլմի հիքմէթ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐՔ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

—

Այս միջոցին «Մշակի» մէջ յուզվում է մեր դրացի ցեղերին ուսումնասիրելու և նրանց այժմեան անկեալ և յետադէմ վիճակը բարւոքելու խնդիրը։ Թէ որքան կարևոր է ճշդիւ ճանաչել և մերձաւորագոյն կապեր, յարաբերութիւններ հաստատել այն ժողովրդների հետ, որոնք ծնունդ են մի և նոյն երկրի, և թէ որքան հարկաւոր է որ զուգընթացաբար զարգանան այն ցեղերը, որոնք ապրում են մի և նոյն հասարակական հանգամանքների մէջ և որոնք իրանց տնտեսական կեանքով անձուկ կերպով կապված են մեզ հետ,—այս արդէն բացատրված է «Մշակի» մէջ, թէև դեռ ոչ այնքան բազմակողմանի և համոզիչ եղանակով։

Կովկասում, հայերիս հետ ապրող այլացեղ ժողովուրդների մէջ առաջին տեղը գրաւում է թաթարական ցեղը, որ միանգամայն տիրապետող և թիւով ամենից շատն է։ Այս վերջինին պատկանում են թիւրքմէնները, կարափափաղները, թէրէքէմէնները, օսմանեան թուրքերը և Ատրպատականի թուրքերը, որոնց մէջ էլ բաղմաթիւ են վերջինները։

Ոչինչ նորութիւն ասած կը լինենք, յայտնելով, որ թուրք ժողովուրդը բացարձակապէս մատնված է անշարժութեան, և ոչ մտաւորապէս, ոչ էլ տնտեսապէս կարողանում է մի ղգալի առաջադիմութիւն գործել։ Ինչու համար. ինչ է սրա պատճառը։ Ահա այս կէտի ուսումնասիրութեան մի թեթև փորձ էլ մենք ենք ուզում կատարել։

Ճանաչելու համար խորապէս՝ ժողովրդի մէջ տեղաբար գոյութիւն ունեցած վիճակը, պէտք է թափանցել նրա կեանքի մէջ, պէտք է չափել այն հոգեկան կենտրոնը, որի վրա պտտվում է ամբողջ այդ կեանքը, կամ որով առաջնորդվում է նա իր բոլոր գործառնութիւնների մէջ։ Արտաքին մարդը հայելին և արդիւնքն է ներքին մարդու։ Հոգեկան, մտաւոր կարողութիւնից, արտաքին աշխարհի մէջ պատահող իրերի պատճառներն ըմբռնելու և դատելու եղանակից կախումն ունի առ հասարակ մարդուս տնտեսական և հասարակական կեանքի հանգամանքը։ Այդ իսկ վերացական ներքին մարդն է տալիս ժողովրդին հասարակական այս կամ այն կազմակերպութիւնը, որի առանցքի վրա դառնում է նրա բովանդակ արտաքին կեանքը։ Արդ՝ Թուրք ժողովուրդը, կանխենք ասելու, գերազանցող աստուածպետական (theocrate) է. ահա նրա անշարժութեան հիմնաքարը, ահա այն գլխաւոր պատճառը, որ նրան անընդունակ է դարձնում ինքնայօժար կերպով, կամ առանձին պատրաստականութեամբ ընդառաջ երթալու քաղաքակրթութեան, նոր գաղափարների, ժամանակի պահանջման հոսանքին։ Աստուածպետականութիւն բառից գուցէ մեր ընթերցողների մեծամասնութիւնը խրտչի. բայց ոչ. այդ դրութիւնն էլ գոյութիւն ունի մարդկանց մէջ, ինչպէս աղնուապետականութիւնը (aristocratie), ինչպէս ռամկապետականութիւնը (democratie) և այլն, և խօսել նրա այն վիճակի դէմ, որը քիչ վերջը պիտի ցոյց տանք, հայհոյել չէ, այլ անաչառ քննադատել։ Այս դրութիւնը կապում, կաշկանդում է թուրքի մէջ նրա մտքի թևերը, բացարձակապէս ճնշում է նրա մէջ ամեն ընկերվարական (social) և քաղաքացիական օրէնք, հալածում է ամեն բարեփոխում դէպի նորը, և հաստատուն է պահում հին, տասնեակ դարեր յառաջ գոյացած և ցայժմ շարունակող վիճակը։ Նա չէ հաշտվում կեանքի պարագաների այն փոփոխութիւնների հետ, որոնք բնական կերպով, անհրաժեշտօրէն առաջանում են ժամանակի թևերի վրա։ Որքան մի մարդու մէջ զօրաւոր է այս վիճակը, այնքան սեղմած է նրա միտքը, այնքան չնչին է նրա աշխարհահայեցողութիւնը, և այնքան անկարող է նա ըմբռնելու և իրագործելու հասարակական գաղափարներ, ընկերվարական օրէնք և քաղաքակրթութեան պահանջներ։

Ինչ միջոցով կարելի է յեղափոխել այս վիճակը։ Մենք դարձեալ կանխում ենք ասելու, որ ամենայն ինչ կախված է մանուկ սերնդից. ապագայում կատարվելի աջող փոփոխութեան սերմերն՝ միայն նրա մտքերում կարելի է ցանել։ Նրան պէտք է կրթել և նրանից պէտք է արդիւնք սպասել։ Սակայն ինչպէս է կրթվում նա. ինչ ոգով է սնուցանվում։ Լաւ ըմբռնելու համար այս կէտը, հարկաւոր է զէթ հարևանցի կերպով չշոշափել թուրքաց կրթարանները (?)։

Մահմեդական ուսումնարանները գտնվում են ժողլանների ձեռքում և կարգադրութեան ներքև։ Մի ողորմելի սենեակում, նստոտած են դետնի վրա, 40—50 կամ 60 աշակերտներ. դպրոցը լցված է նրանց աղաղակներով. նրանք բարձրաձայն կարդում, սերտում և գոց են անում հատուածներ... կրօնական պատմութիւնից. կրօնի դասագիրքն ամեն գրքերին փոխանակում է։ Ո՞վ չէ տեսել թուրք աշակերտներին, դասագիրքը ձեռին, նստած տեղին օրորվելով և առանձին եղանակներով կրօնական հատուածներ սերտելն և գոց անելը։ Ուսման մեծագոյն մասը կայանում է դրա մէջ։ Աշակերտը տարիներ և շատ տարիներ չարչարվում է դրա վրա և պէտք է երևակայել նրա և ծնողաց ուրախութիւնը, երբ նա յաջողում է վերջ ի վերջոյ բոլոր այդ հատուածները բերանացի սովորել և դառնում է հաֆը։ Բայց այդ հատուածները նա անկարող է հասկանալ. դասագրքի լուսանցքի վրա շեշտակի գրած մեկնութիւնները չեն օգնում նրան և նա այն ժամանակ միայն կարողանում է ինքնուրոյն հասկանալ և ըմբռնել, երբ ձեռք է առնում սարֆը և թահվը (քերականութիւն և համաձայնութիւն)։ Բայց շատ քիչերին է վերապահված հարկ եղածին չափ ճշգրտութեամբ սովորել արաբական քերականութեան նոյն իսկ տարերքը։ Էվզանի թիսայի և նասարա, եէնսուրու և այլն կշռորդութիւնների (բայերի) ախտաւոր և առողջ մասերը (որոնք բայերի գլխաւոր կրնճռոտ մասերն են) ըստ արժանոյն սովորելու համար, որքան տարիներ է գլուխ յոգնեցնում թուրք աշակերտը և դարձեալ ցանկալի արդիւնքին, այսինքն արաբական քերականութիւնը կատարելապէս սովորելուն չէ հասնում. և այս՝ ինչու համար է աշխատում.—որպէս զի կրօնական դասագրքի հատուածները կարողանայ հասկանալ։ Այս աշխատութիւնը մենք բնական ենք դտնում, նրանց համար, որոնք աւելի բարձր վիճակի են ուզում հասնել. օրինակի համար միւդէրրիս լինել, այն ժամանակ պէտք է սովորեն նաև իլմի մանթիկ—տրամաբանութիւն, իլմի քէլամ—աստուածաբանութիւն, իլմի հիքմէթ

Ամենաշատ ուրախանում է, երբ նրան ասում են, որ նա ինքն է գրել Ֆրանսիայի ամենամեծ գրողի գրքերը։ Ինչպես ասում է նրա ընկերը, Ֆրանսիայի ամենամեծ գրողը

զաքական-գրական շաբաթաթերթեր՝ 87, գիւղատնտեսական հրատարակութիւններ՝ 33, մանկավարժական և ժողովրդական՝ 15, իսկ մանկական ամսագիրների թիւը 13 է։

—

Ինչպէս հաղորդում է «Кассій» լրագիրը, վերջին ժամանակներս Բաքու քաղաքում երևացել են մի քանի դերվիշներ, որոնք եկել են Պարսկաստանից. պտտելով քաղաքի թիւրքաբնակ փողոցներով, նրանք շատ կենդանի կերպով նկարագրում են այն խղճուկ վիճակը, որի մէջ ընկել են նրանց հաւատակիցները Պարսկաստանում՝ խոլերայի պատճառով, որը այժմ այնտեղ զոհեր է անում։ Դերվիշներին միշտ շրջապատում է ահագին բազմութիւն, որը ուշադրութեամբ լսելով նրանց պատմութիւնները, սիրով դրամական նուէրներ է անում։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի «Հրատարակչական ընկերութիւնը» իր օգտին, դեկտեմբերի սկզբներին կազմելու է մի պարահանդէս Թիֆլիսի ժողովարանում։

—

Ինչպէս մեզ հաղորդում են, մտադրութիւն կայ մի շարք հրապարակական դասախօսութիւններ կազմելու, որոնցից կայացած արդիւնքը պէտք է յատկացնվի Թիֆլիսի «Հրատարակչական ընկերութեան»։ Գեղեցիկ միտք է։

—

Կ. Պոլսի յայտնի հայ գործիչ պ. Մինաս Չերազ, թողնելով Թիւրքիայի մայրաքաղաքը, ուղևորվել է արտասահման։ Այժմ Լոնդոնում իր բնակութիւնը հաստատելով, նա ձեռնարկել է այդ քաղաքում մի նոր լրագրի հրատարակութեան, միմիայն ֆրանսերէն լեզուով, «L' Arménie» վերնագրով։ Թերթը քաղաքական և գրական բովանդակութիւն ունի և նրա նպատակն է՝ Եւրոպային ծանօթացնել Հայաստանի հետ, հայոց պատմութեան, կրօնի, լեզուի, գրականութեան և արհեստների հետ։ Թերթը կը հրատարակվի ամիս մի անգամ, իւրաքանչիւր ամսի 15-ին։ Առաջին համարը լոյս է տեսել 2,000 օրինակի քանակութեամբ և ձրիապէս է տարածված։ Ապա ցանկացողները կարող են գրվել լրագրին։ Տարեկան գինը 10 շիլինգ է և պէտք է դիմել հետևեալ հասցէով. Londres S. W. Broomwood Road 42, Wandsworth Common.

—

Շաբաթ օր, 18-ին Նոյեմբերի, ԹԻՖԼԻՍԻ Թատրոնում տրվեց յայտնի ռուս երաժիշտ Անտոն Ռուբինշտէյնի երաժշտական գործունէութեան յիսնամեակը։ Այդ երեկոյ կօնցէրտ տրուեց Թատրոնում, որը ամբողջապէս բաղկացած էր Ռուբինշտէյնի դրուածներից։ Օրկէստրը ածեց Ռուբինշտէյնի «Ովկիանոս» անուանված սիմֆոնիան, ապա նրա «Դէմոն» և «Ֆէրամորս» օպերաներից կտորները և «Դոն Կիխոտ» սիմֆոնիական պատկերը։ Տիկիններ Զարուդնայա և Գէյդներ երգեցին թէ օրկէստրի և թէ պիանոի դաշնակցութեամբ Ռուբինշտէյնի օպերաներից կտորներ և նրա romանսներ։ Նմանապէս և պ. Տարասկով երգեց յօբելեարի մի քանի romանսներ և մի կտոր նրա «Նէրոն» օպերայից։ Տիկին Ռնտիլովա (հանդուցեալ Նիկոլայ Ռուբինշտէյնի աշակերտուհի) ածեց պիանոի վրա յօբելեարի մի քանի պիէսաներ։ Առաջին բաժանմունքի մէջ տիկինը ածեց օրկէստրի դաշնակցութեամբ, Երկրորդում սոլո։ Տիկինը կարդից դուրս ածողներից չէ, բայց ածում է զգացմունքով և բարեխիղճ կերպով։ Այդ երեկոյ թատրոնի բեմը զարդարված էր ծաղիկներով և կանաչով, որոնց մէջտեղ կանգնեցրած էր յօբելեարի կիսարձանը և թատրոնական դահլիճն էլ սովորականից չքեղ լուսաւորված էր։ Սակայն դահլիճը լի չէր։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 14-ին, գիշերով, Ղուբի-Մէյդան ասված հրապարակի վրա երեք հոգի թուրքեր յարձակվում են կառքով անցնող մի այլ թուրքի վրա, որին գնտակի երեք հարուածով սպանում են, ծանր վէրք տալով և թուրք կառապանին։ Զարադործները կալանաւորված են։»

—

Լսում ենք որ Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը 18-ին Նոյեմբերին իր կայացած նիստում վճռել է խորհրդի անդամ պ. Զէլինսկու առաջարկութեամբ մի դրադարան-ընթերցարան հիմնել։ Վճռված է ընկերութեան դումարներից նշանակել դրադարանի համար իւրաքանչիւր տարի 2000 – 2600 բուբլի։ Այդ գումարի մէջ մտնում են՝ ընկերարանի վարձը, գրքեր առնելու գումարը և դրադարանապետի ռոճիկը։ Բացի յիշեալ գումարից խորհրդի անդամներ դիտաւորութիւն ունեն 3000 բուբլու չափ ժողովել հանգանակութեամբ դրադարանի հաստատութեան գործին միանուագ օգնութիւն հասցնելու, կահկարասիներ առնելու համար և այլն։ Դրադարանը կընդունի, իհարկէ, և նուէրներ՝—գրքեր, բրոշիւրներ, ամսագիրներ, լրագիրներ և ձեռագիրներ՝ ամեն լեզուներով։ Ցանկալի է, ի հարկէ, որ գրքերի մեծ մասը բաղկացած լինէր թէ հայոց գրքերից և թէ Կովկասագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ լեզուներով հրատարակված գրքուածներից։

—

Նոյեմբերի 18-ից Ֆիւրերի նախկին ցիրկում բացվեց Տօմսօնի ցիրկը, որը իր խմբով նոր է եկել Թիֆլիս։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 9 Նոյեմբերի

Պոլսի մէջ եկեղեցական Համագումար ժողովի Ցանձնախումբը կը շարունակէ իր աշխատութիւնները. կառավարութեան կամ արքունի պալատը մատուցուելիք տեղեկագիրը, որու մասին արդէն բաւական խօսած եմ, պատրաստուած է, սրբազրութիւնները կըլլան, համաձայնութիւնը քիչ օրէն կը կայանայ եկեղեցականներու միջև և տեղեկագիրը կը մատուցուի։

Համաձայնութեան կարօտ կէտերն են թէ՝ որու պիտի մատուցուի, Դրան թէ Արքունի պալատը։ Ո՞վ պիտի մատուցանէ. պատրիարքը, թէ մի քանի եպիսկոպոսներ։

—

Եկեղեցական Համագումար ժողովի ամենէն գործունեայ և արիասիրտ մի եկեղեցականի նկատմամբ անհաճոյ դիտողութիւններ կարդացինք «Մշակի» մէջ, զոր այսօր ստացանք։ Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոսի նկատմամբ է խօսքերնիս, որու մասին անստորագիր թուղթեր ցրուած են, ինչպէս այստեղ, նոյնպէս և ձեր կողմերը։

Բնականաբար փափագելի էր, որ ամբաստանողները բացերես հրապարակ ելնեն—զէթ այստեղ խրկուած թուղթերը անստորագիր էին։

Մատթէոս եպիսկոպոս հրաժարական տուաւ Եգիպտոսի առաջնորդական պաշտօնէն. պատրիարքը շատ համակիր չէ Իզմիրլեան եպիսկոպոսին, Կրօնական Ժողովի անդամներէն շատերը, ինչպէս նաև ուրիշ եպիսկոպոսներ, կը փափագէին, որ Եգիպտոսի առաջնորդին հրաժարականը ընդունուի, զի անոր յաջորդելու փափագողները շատ են, բայց Եգիպտոսի հայոց կողմանէ այնպիսի սէր և համակրութիւն յայտնուեցաւ Իզմիրլեանի նկատմամբ, որ պատրիարքարանը հարկադրուեցաւ մերժել այդ հրաժարական, և դատապարտել, եթէ ոչ նիւթապէս, զէթ բարոյապէս, այն անձինք, որք խոչնդոտներ կը յարուցանեն Իզմիրլեանի դէմ։—Անցողաբար ըսենք թէ անոնց մէջն ալ ազգասիրական ոգով շարժումներ կան և հաւանական է որ հաշտուէին իրենց առաջնորդին հետ, եթէ իմաստուն հաշտարար մը գտնուէր.

Պատրիարքարանը հրատարակեց հետևեալ պաշտօնական ազդը։

«Գերապատիւ սրբազան եղբայր ի Քրիստոս. Ազգ. Կեդրոնական Վարչութեան խառն Ժողովը գոհութեամբ լսեց, որ Ձեր Գերապատութիւնը՝ մեր վերջին հրաւիրանաց վրա՝ յօժարած է վերստանձնել Եգիպտոսի առաջնորդական պաշտօնը՝ զոր արժանապէս վարելով ցարդ՝ ըստ իւր ծանուցեալ ձեռնհասութեան՝ կրցած էր այնքան արդիւնս ածել։ Ազգային Վարչութեան ուշադրութենէն չէին վիրապած նաև այն անպատշաճ ցոյցերն, որք այս վերջին ժամանակներս քանի մ'անձանց կողմէ տեղի ունեցած էին յԵգիպտոս, հակառակ օրինաւորութեան և կամաց ողջամիտ ժողովրդեան վիճակին, որ գոհ Ձեր բարւոք պաշտօնավարութենէն՝ կը ցանկայ ըստ առաջնոյն վայելել Ձեր հովուական խնամքն. ուստի խառն Ժողովը դժգոհութեամբ պարսաւեց այդ ցոյցերն, որոց հեղինակք անխոհեմութիւն կը գործէին՝ տկարացնելու հոգևոր իշխանութեան ազդեցութիւնն և խանդարելու վիճակին բարեկարգութիւնը, թերևս անդիտակից իրենց արարքանց հետևանքներուն, և ծանր պատասխանատուութիւն կը հրաւիրէին իրենց վրայ։

Ըստ որոշման Ազգ. Վարչութեան խառն Ժողովոյ՝ կը հաղորդեմք Ձեր Գերապատութեան իւր մտնաւոր գոհութիւնն՝ այն անձնուիրութեան և կարգապահութեան ոգւոյն համար, որով համակերպիլ փութացիք Ազգ. Վարչութեան որոշման, և անկիրկմիտ եմք որ նեցուկ ունենալով Ձեզ միշտ տեղւոյդ ազգային ժողովոց սէրն ու վստահութիւնը, դուս իրաւամբ կը տածեն առ Ձեզ, պիտի չարունակէք՝ որպէս ցարդ՝ հովուել խաղաղութեամբ այս կարևոր վիճակն և յառաջ տանիլ այն բարեկարգութիւններն, որով յաջողեցաք Եգիպտոսի Առաջնորդարանին ելմտական խանգարեալ վիճակը բարւոքել, ազգային հաստատութիւնները պայծառացնել, վիճակային գործոց վարչութիւնն ըստ տեղական հանգամանաց օրինաւոր ուղղութեան մէջ դնել, և այն կարևոր անձերն, որք ի տես իրաց անցեալ ցաւալի վիճակին՝ մեկուսացեր էին, ամփոփել ի մի, մատուցանելու համար վիճակին՝ իրենց կարևոր ծառայութիւնը։

Մաղթելով, Սրբազան Եղբայր, յԱմենակալէն Աստուծոյ պարգևել Ձեզ կարողութիւն և կատարեալ առողջութիւն ի ծառայել վասն պայծառութեան Ս. Եկեղեցւոյս, Մնամք աղօթակից Պատրիարք Կ. Պոլսոյ Խորէն Արքեպիսկոպոս»։

Քանիցս առիթ ունեցած ենք այստեղ գրել Իզմիրլեան եպիսկոպոսի մասին. վերջին անգամ պատրիարքական ընտրելի էր շատերու մտքին մէջ, և կը կարծէինք թէ յաջորդ ընտրութեան—որ հաւանօրէն պիտի ուշանայ—ամեն եպիսկոպոսներէ աւելի Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոս պատրիարք ըլլալու հաւանականութիւն ունի։

Այդ եպիսկոպոս չունի մեծ ուսում, սակայն իր բարոյական համբաւը անաղարտ է. ջերմապէս կը պաշտէ իր եկեղեցին. հաստատամիտ է և քառաքթեր ունի. անկիրկիռ է. քաջ կը ճանչնայ հայոց եկեղեցւոյ օրէնքներն ու պատմութիւնը, վերջապէս այնպիսի եպիսկոպոս է, որ շատերէն եթէ սիրուած է, բայց ամենէն յարգուած է։

Միայն թէ այս առաւելութիւններու հետ միասին կան ուրիշ քննադատելու կէտեր։ Իզմիրլեան եպիսկոպոսի հաստատամտութիւնը մինչև յամառութեան կը տանի. շատ խիստ է. անցեալին մէջ Խրիմեան և Ներսէս պատրիարքներու հետ բարեկամ ըլլալէ հեռի էր, և այս բանս ամենուս շատ ծանր եկած է։ Սակայն այժմ վիճակը փոխուած է. Հայրիկ, ինչպէս ընդհանուր ազգին, նոյնպէս և Իզմիրլեանի պաշտելին է. «Երբ Հայրիկ կը խօսի, ամենքս պէտք է լռենք և հնազանդենք», կրսէ Իզմիրլեան։ Զը մոռնանք ըսել, թէ Խրիմեանի ու Ներսէսի հետ Իզմիրլեանի ունեցած հակառակութիւնը ազգային ընդհանուր քաղաքականութեան առթիւ չէր, այլ ազգային ներքին գործերու պատճառով, մասնաւորապէս Սահմանադրութեան համար էր. Իզմիրլեան՝ ջերմապէս Սահմանադրական, կուզէր որ Սահմանադրութիւնը կատարելապէս յարգուի և պատրիարքները, թէև Խրիմեան կամ Ներսէս Վարժապետեան անունը կրեն, դուրս չելլեն բնաւ Սահմանադրութեան շրջանակէ։

Իզմիրլեան եպիսկոպոս այժմ մեր եկեղեցականներու մէջ գրաւած է առաջնակարգ տեղ մը։ «Արևելքի» մէջ անոր նկատմամբ հրատարակուած տեղեկութիւնները ամենակատարեալ ստուգութիւն են։ Բաւական չէ ըսել թէ այդ տեղեկութիւններ սուտ են, սխալ են, այլ պէտք է հերքել. թիւերը թիւերով հերքելու է։ «Արևելքի» մի խմբագիրն, որ Եգիպտոս գնացած էր, իբր յաւուկ թղթակից, կը պատմէր, ինչ որ տեսած էր։ Ոմանք արդարև ուղեցին թերահաւատ ըլլալ և իրենց դիտողութիւններն ըրին թղթակցին, և այս վերջինս պատասխանեց.

—Եթէ կուզէք, գնացէք հարցուցէք Նար-Պէյ սրբազանին։ Նար-Պէյ, ինչպէս ամեն ոք գիտէ, հաշտ բարեկամ մը չէ Իզմիրլեանի, սակայն Գահիրէի եկեղեցւոյն մէջ այնքան ներքողականով դրուատեց Իզմիրլեանն ու իր գործերն, որ անոր ջերմագոյն բարեկամն իսկ ատկէ աւելի չէր կըրնար ըսել։

Այլ չերկարենք այս նիւթին վրայ. այսքանը կը բաւէ. կը կարծենք թէ ժամանակ մը Իզմիրլեան լուիկ, մանրիկ կաշխատի, ինչպէս ցարդ, իր ժողովուրդին համար։ Եւ երբ պարագաներն հրաւիրեն զնա հրապարակ ելլել, այն ատեն, եթէ ապրինք, տեսնի մանրամասն և տեսնի բազմակողմանի տեսակէտներով կը խօսենք անոր մասին։

—

Իզմիրլեան եպիսկոպոսի միջանկեալ խնդիրը շեղեց մեզ մեր ճամբէն, Համագումար ժողովէն պէտք էր անցնէինք Կրօնական ժողովին, և ահա կ'անցնենք։ Օրուան նորութիւնը—կրօնական նորութիւնը—է Կրօնական ժողովի մի շրջաբերականը, զոր այս շաբաթու հրատարակեց «Արևելք»։ Դրամօժիտի կամ ինչպէս այստեղ կըսենք դրախտամի, խնդիրն է, որ մեր եկեղեցական հայրերու և Պատրիարքին մտատանջութեան առարկայ կ'ըլլայ։ Պոլսի մէջ այլ ևս բացառութիւն կը կազմէ առանց դրամօժիտի աղջիկ կարդելը. և այն ամեն աղջիկներ, որ զուրկ են այդ զօրաւոր աջակցէն, ուրիշ հեռանկար չունեն իրենց աչքերու հանդէպ, բայց եթէ պառաւել։ Եկեղեցական հարք կը յուզուին և կը սպառնան այն նշանտութեան և հարսնեւոսութեան հրամանին չը տալ եթէ աղջկան կողմէ դրամ տրուի։

«Նկատելով՝ կ'ըսէ շրջաբերականը, որ այնպիսի բազմաշնաս սովորութեան պատճառաւ՝ բազմաթիւ օրիորդք կը զրկուին ամուսնական վիճակէ, և կամ մայրական պաշտօնէ, որ է նուիրական կոչումն կնոջ կարդեալ յԱրարչէն.

«Նկատելով՝ որ այս պատճառաւ տեղի կունենան յոգնաթիւ բազմապիսի աղէտք և անբարոյականութիւն՝

«Կրօնական Ժողովն իւր պարտաւորութիւնն կը համարի վերակրկնել նախորդ Ժողովոյ արդէքը դրամօժիտի օտարախորթ սովորութեան դէմ և կը հրամայէ քարոզչաց՝ որ եկեղեցւոյ բեմից ստէպ ստէպ խօսել դրամօժիտի անբարոյական սովորութեան դէմ. միանգամայն կը պարտաւորէ դքահանայս՝ որ ծնողաց յիշեցնեն Կրօնական Ժողովոյ հրամանն դրամօժիտի դէմ։ Իսկ երբ ծնողք անլսող գտնուին, և դրամօժիտին հարսնացնել որոշեն իրենց դուստրը, քահանայք պարտաւոր պիտի լինին իրազեկ առնել զՊատրիարքարանն նշանտութիւնէ առաջ»։

«Կրօնական Ժողովն իւր սոյն որոշման հսկողութիւնն և ճշգիւ գործադրութիւնն կը յանձնէ Պատրիարքական փոխանորդ Հօր։ Մեք ևս մեր Պատրիարքական իշխանութեամբ կը հրամայենք՝ որ Կրօնական Ժողովոյ սոյն որոշումն լիովին գործադրուի»—և այլն։

Այդ շրջաբերականէն մեր առաջ բերած կտորներուն մէջ հետաքրքրական կէտն այն է, որ Կրօն. Ժողովն ու Պատրիարք իրենց բոլոր ըսպառնալիքները ի գործ կը դնեն ընդդէմ այն ծնողներու, որք դրամօժիտ կուտան իրենց աղջիկներու. արդ ոչ մէկ ծնողք իր յոժար կամքովը դրամ տալու պատրաստականութիւն ունի, հարկն է որ զինքն առ այդ կ'ստիպէ. աղջիկներն ու իրենց ծնողք զրկուողներն են, զոհերն են, ուրեմն ինչ հարկ անոնց դէմ սպառնալիքներ ընել։ Եթէ կայ մեղադրելի անձ մը, այս ալ երիտասարդն է, որ դրամօժիտ կը պահանջէ, ուրեմն պարզ է որ սպառնալիքն անոր դէմ ըլլայ, ուստի մեզ անբացատրելի կը մնայ Կրօնական Ժողովի այս ուղղութիւն։

Ասկէ զատ այդ շրջաբերական ցոյց կուտայ թէ՝ մեր եկեղեցականները բնաւ տեղեակ չեն մեր ընկերական կազմակերպութեան և կը կարծեն թէ դրամօժիտի խնդիրը շրջաբերականաւ լուծուելու խնդիր է. ընդհակառակը լաւ ուսումնասիրելով մեր արդի տնտեսական պայմանները պիտի տեսնուի որ եթէ բացարձակապէս արդելուի դրամօժիտ տալը, այն ատեն ամուսնութիւններն աւելի սակաւաթիւ պիտի ըլլան։ Թողունք որ այդ խնդիրներ բնաւ չեն հնթարկուիր Կրօնական Ժողովի և եկեղեցւոյ իրաւասութեան։ Եւ կարծենք թէ շատ լաւ չըլլար թոյլ տալ, որ յանուն եկեղեցւոյ եկեղեցականք իրենց քմահաճոյքին, կամ իրենց տգիտութեան համեմատ, բացարձակապէս տիրապետեն մեր անհատական կեանքի վրա։

—

Քաղաքական ու կրօնական խնդիրները դարձեալ մեզ ժամանակ չը թողին խօսել գրականութեան վրայ. այս օրերս գրական զարթում մը ունեցանք, պաշտօնական զարթում։ Ուսումնական խորհուրդը իր հովանաւորութեան ներքև կառնէ գրաբարի անարատ պահպանութիւնը և աշխարհաբարի մշակութիւնը և կորոշէ հիմնել հայկական կաճառ մը, Գրաւոսումնական Ակումբ անուամբ։ Այդ ակումբի պարտականութիւնները պէտք է ըլլան՝

1) Հսկել ազգային լեզուի մշակութեան և զարգացման, թէ հնոյն և թէ նորոյն։

2) Զբաղիլ պատմական, հնախօսական և մատենագրական խուզարկութեամբ։

3) Իւր հակողութեան ներքև առնուլ և կազմակերպել ազգային մատենադարան։

Ուսումնական խորհուրդի յղացած ուսումնական Ակումբի ծրագրին համաձայնութիւնն է այս։ Խորհուրդը կազմած է մասնախումբ մը, եօթն անձերէ բաղկացեալ. այդ յանձնախումբ, իբր հիմնադիր մարմին, պիտի պատրաստէ կանոնագիր մը, պիտի ընտրէ իր անդամակիցները և պիտի որոշէ իր նիստերուն տեղին և ժամանակն։ Հիմնադիր յանձնախումբի անդամներ են՝ Նարպէյ և Սրուանձտեանց եպիսկոպոսներ, Հիւնքարպէյէնտեան, Մկրեան քահանայներն, և պարոնայք՝ Իսթիւճեան, Մամուրեան, Ազարէգեան։

Տեսնենք, ինչ կանոնագիր պիտի գծեն, ինչ ուղղութեան պիտի հետեւեն և ըստ այնմ կը խօսենք։

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Երբեմն քաղաքական լրագիրների գրուածքների գլխաւոր հերոսը, Բուլանժէ, այժմ այնքան մոռացված է իր համախոհներից, որ ոչ թէ միայն այլ ևս գործելու միջոցներ չունի, այլ նոյն իսկ փողի պակասութիւն է զգում։ Այդ չատ ծանր կարող է թվալ հռչակաւոր գեներալին, որովհետև մի ժամանակ փողը կարկուտի նման էր թափվում նրա գլխին ամէն կողմից։

—Կրեսէ կղզու տեղական իշխանութիւնը այս օրերս դիմելով տեղական ազգաբնակութեանը, յայտնել է, որ թիւրքաց սուլթանի ցանկութեամբ չուտով բէֆորմներ կը մտցնվեն կղզում, բայց քրիստոնեայ ազգաբնակութիւնը կասկածով է վերաբերվում այդ լուրերին։ Կրետէի քրիստոնեայ ազգաբնակութիւնից արդէն չատերը սկսել են դաղթել դէպի Յունաստան։

—Բրազիլիայից զրում են, որ այնտեղի հոգևորականութիւնը բարեկամական դիրք է բռնել դէպի նոր՝ հանրապետական կառավարութիւնը։

—Պարիզից հաղորդում են, որ ֆրանսիական քաղաքական շրջաններում մի քանի տարուց ի վեր արդէն համոզված էին՝ որ Բրազիլիայում հանրապետութիւն կը հաստատվի չուտով։

—Գերմանական հասարակական կարծիքը ներկայումս զբաղված է գլխաւորապէս սոցիալիստների հարցով, մանաւանդ որ սոցիալիստները վերջին ընտրութիւններում զդալի աջողութիւն են ունենում։ Այդ կուսակցութիւնը դրամական մեծ միջոցներ ունի և անդադար նիւթական օգնութիւն է ստանում դանազան կողմերից։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 17 Նոյեմբերի։ Պատգամաւորների ժողովի նախագահ 86 ձայնով ընտրված է Գէորգ Կանտակուզէն. նրա հակառակ թեկնածու Կատարջի ստացաւ 54 ձայն, իսկ Դմիտրի Բրատիանո—23 ձայն։ Ընտրված 4 փոխ-նախագահները հաճելի են մինիստրութեան։

ՎԻԵՆՆԱ, 17 Նոյեմբերի։ Լուրերին նայելով, Իսման Օրա, Էրցհերցոգ Սալվատոր՝ Օրաի դղեակը վարձով տուեց Բրազիլեայի նախկին կայսրին։ Միւս տեսակ լուրերին նայելով՝ Դոն-Պեդրո կապրի իր քրոջ, Էրցհերցոգուհի Անտուանետի մօտ, Զալցբուրգում։

ԲԷԼԳՐԱԴ, 17 Նոյեմբերի։ Մինիստրների խորհուրդը, խնամակալների ուշադրութիւնը հրաւիրելով Միլանի կողմից յայտնված տեղեկութիւնների վրա, որոնք յուզում են հասարակութիւնը, և որոնք սկզբում տպագրված էին ‹Journal des Debats›-ի և ‹Corresp. de l'Est›-ի մէջ, խնդրեց Ռիստիչին հաղորդել Միլանին, որ եթէ այդպիսի երևոյթները կը կրկնվեն, կառավարութիւնը ստիպված կը լինի հռչակել Միլանին՝ իբրև Սերբիայի և թագաւորական տան համար վնասակար մի մարդ։

ՆՕՎՕՐՕՍԻԲՍԿ, 18 Նոյեմբերի։ Այսօր, մաղթանքից յետոյ, բացվեց Ազովեան-Դոնի առևտրական բանկի բաժինը։

ՆԻԻ-ԵՕՐԿ, 18 Նոյեմբերի։ Ֆրանսիան ընդունեց Բրազիլիայի հանրապետութեան գոյութիւնը։

ԼՕՆԴՕՆ, 18 Նոյեմբերի։ Սէն-Վինցենտից հեռագրում են, որ այսօր կէս գիշերին եկաւ ‹Ալազաս› նաւը, որի վրա գտնվում էր Դոն-Պեդրո կայսրը իր ընտանիքով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 Նոյեմբերի։ ‹Правит. Вѣстникъ›-ի մէջ հրատարակված են Եկատերինոսլավի և Պոլտավայի ազնուականութեան ամենահպատակ ուղերձները, գիւղական և հաշտարար դատարանական հիմնարկութիւնների կերպարանափոխութեան առիթով։ Թագաւոր Կայսրը Ամենաողորմածաբար հրամայել բարեհաճեց՝ չնորհակալութիւն յայտնել յիշեալ ազնուականներին։ Եկատերինոսլավի ազնուականութեան ուղերձում ասված է. ‹Այն օրից, երբ հրատարակվեց հրովարտակ, որով յայտնվում էր, թէ ազնուականութեանը նորից յանձնվում է առաջնակարգ դիրք բռնել տեղական ինքնավարութեան և դատավարութեան մէջ, այն օրից սկսվեց ազնուականութեան համար նոր շրջան, և այդ դասակարգը, վերանորոգված Միապետի հաւատով, ուրախութեամբ սպասում էր որ Թագաւորը նորից հրաւիրէր նրան դէպի այդ ծառայութիւնը։ Յունիսի 12-ի օրէնքով ազնուականութեան միջից ընտրված մարդկանց տրվեց մեծ իրաւունք, որը դէպի Միապետը ունեցած հաւատարմութեան հետ միասին՝ կը վերացնի գիւղական կեանքի կանոնաւոր զարգացման մէջ եղած արգելքները։ Արքայական այդպիսի մեծ հաւատը չերմ ցանկութիւն է առաջ բերում Միապետի առաջ յայտնելու անսահման չնորհակալութիւն։ Եկատերինոսլավի ազնուականութիւնը բարձրագոյն կամքի այդ արտայայտութիւնը ընդունում է ոչ թէ այդ դասակարգի առաջնակարգ նշանակութեան վերաբերեալ մտաղրութեամբ միայն, այլ գիտակցօրէն ըմբռնելով այն սուրբ պարտականութիւնը՝ որով պէտք է աշխատի իրագործել Կայսրի նախաորոշումները՝ Ռուսաստանի բարօրութեան համար›։ Պոլտավայի ազնուականութեան ուղերձում ասված է. ‹Ազնուականները այժմ էլ, ինչպէս և միշտ, իրանց սուրբ պարտքն են համարում լինելու Միապետի նախորոշումների հաղորդիչներ։ Պոլտավայի ազնուականութիւնը պատրաստ է իր ամենալաւ ոյժերը նուիրելու գահի և հայրենիքի ծառայութեանը։—Երկկ ազնուականների ժողովարանի դահլիճում տօնվեց Ռուբինշտէյնի 50-ամեայ գործունէութեան յոբելեանը։ Էստրադայի վրա տեղաւորվեցան պատգամաւորները, նրա առաջ տեղ էր պատրաստված յոբելեարի համար։ Թագաւորական լօժայում կային՝ Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ և Մեծ Իշխանուհի Եկատերինա Միխայլօվնա՝ որդու և աղջկայ հետ։ Այդ լօժայի դիմացի լօժայում տեղաւորված էր յոբելեարի ընտանիքը։ Ռուբինշտէյնին չնորհաւորեցին ազմկալի ծափահարութիւններով։ Տօնախմբութիւնը սկսվեց յոբելեանի մասնաժողովի նախագահի՝ պրինց Գէորգ Միկլէնբուրգ-Ստրելիցկու ճառով, որից յետոյ ռուսաց երաժշտական ընկերութեան նախագահ, սենատոր Մարկովիչ հաղորդեց, որ յոբելեարին չնորհված է Նորին Մեծութեան զրասենեակից 3,000 րուբլի թոշակ. հաղորդվեց, որ Մեծ Իշխանուհի Ալէքսանդրա Եօսեֆօվնա ուղարկել է յոբելեարին իր պատկերը՝ ինքնագիր մակագրութեամբ. նոյնպէս և հաղորդվեց մինիստրների և ուրիշ բարձրաստիճան անձանց չնորհաւորութիւններ. ներկայացվեց ոսկէ մեդալ Կայսերական ռուսաց երաժշտական ընկերութեան կողմից, Ս. Պետերբուրգի համալսարանի պատուաւոր անդամի կոչումի դիպլոմ. քաղաքագլուխը ներկայացրեց ուղերձ և յայտնեց, որ որոշված է յոբելեարի անունով երկու ստիպենդիա ունենալ կոնսերվատորիայում և յոբելեարին վերապահելով դրանց ընտրելու իրաւունքը. համերգը կատարեց յոբելեարին ուղղած մի երաժշտական չարադրութիւն (Զայիօվսկու մուզիկան, Պոլոնսկու խօսքերը)։ Դրանից յետոյ տեղի ունեցան պատգամաւորների չնորհաւորութիւնները, յայտնեցին ստացած բազմաթիւ հեռագիրների և նամակների մասին և կարդացվեց Հանովէրի թագուհի Մարիայի կողմից ստացված հեռագիրը։ Հանդէսը վերջացաւ Բախի կոնտատով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 Նոյեմբերի։ Պետական բանկը Պետերբուրգում, մինչև փոփոխութեան, կը վերցնի վէկսէլների զեղչով $5^1/_2$ մինչև 6%, իսկ վէկսէլներով ապահովված մասնաւոր ընթացիկ հաշիւներով՝ 6%։—‹Гражданинъ› հաղորդում է, որ Ֆինանսների մինիստրութիւնը արգելեց այսուհետև Եֆիմով և ընկ. բանկային գրասենեակին ծախել ներքին փոխառութեան տոմսերը վճարման յետաձգութեամբ։—Այս օրերս սպասում են սաւառնացութեան զադարման. Լաղոգեան ծովակից սկսեց սառուց լողալ։ Ջերմաչափը զրօից դած է իջել։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Նոյեմբերի 17-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ—	93 ր.	35	›
Բերլինի վրա 100 մարկ —	45 ›	60	›
Փարիզի վրա 100 ֆրանկ —	36 ›	90	›
Ոսկի — արժէ —	7 ›	54	›
Մաքսային կուպօններ —	150 ›	50	›
Ազատի — — —	1 ›	10	›
Բօրսային դիսկօնտներ —	6 և 7%		
Պետակ. բանկ. 5% առմս 1-ին չրջանի	99 ›	37	›
— — — — 2-րդ —	98 ›	75	›
— — — — 3-րդ —	98 ›	87	›
— — — — 4-րդ —	99 ›	25	›
— — — — 5-րդ —	99 ›	—	›
— — — — 6-րդ —	98 ›	87	›
Նոր 4%	84 ›	25	›
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	99 ›	12	›
— — 2-րդ —	99 ›	—	›
— — 3-րդ —	99 ›	12	›
Ներքին 5% առաջին փոխառութ.	247 ›	—	›
— երկրորդ —	227 ›	55	›
$5^1/_2$% բէնտա.	102 ›	—	›
Ոսկեայ բէնտա.	171 ›	—	›
Եօթերորդ կօնսոլիդ. փոխառ.	141 ›	—	›
Նոր երկաթուղային բէնտա	98 ›	75	›
5% գրաւակ՝ թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մետ.	147 ›	25	›
— — թղթադ.	91 ›	50	›
Գրաւ. թղ. Ազն. բանկի	98 ›	—	›
Գիւղական բանկի	101 ›	87	›
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ.	97 ›	50	›
— —Բուխարայի-18 և 43տ.	97 ›	50	›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	93 ›	62	›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	93 ›	50	›
Օդեսայի — —	93 ›	25	›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	84 ›	25	›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ հրաւիրում է ցանկացողներին կապալով վերցնել Գեներալ ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐՕՎԻ նախկին ԿԱԼՈՒԱԾՔԸ, որը գտնվում է Երևանեան հրապարակի վրա, Պուշկինսկայա փողոցի և Միջին-փողոցի անկիւնում։ Պայմանագիրները կարելի է կարդալ Ընկերութեան Վարչութեան մէջ ամեն օր, առաւօտեան ժամը 11-ից մինչև 1-ը կէսօրից յետոյ։ Ցանկացողների յայտարարութիւնները այդ մասին կընդունվեն մինչև դեկտեմբերի 5-ը ներկայ տարվայ, Ընկերութեան Վարչութեան մէջ, Սերգիևսկայա փողոցում, Ամիրաղօվի տանը։ 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՓՈԽԱՏՈՒ ԱՐԿՂԸ յայտնում է „Պրիկազի“ մէջ գրաւ դնողների տեղեկութեան համար, (ձեռքի գրաւների), որ վերջնական արտօնական ժամանակամիջոցը իրանց տոմսակների վերջանում է ներկայ 1889 թուին նոյեմբերի 30-ին և այդ պատճառով նրանք հրաւիրվում են մինչև յիշված ժամանակամիջոցը կամ յետ դնել իրանց գրաւ դրված իրեղէնները, կամ նորից գրաւ դնել Արկղի կանոններով։ Հակառակ դէպքում գրաւ դրված իրեղէնները կը ծախվեն աճուրդով։ 1—3 (և. հ. շ.)

Լոյս տեսաւ սարկաւագ Ց. Նազարեանցի կազմած

1890 ԹՈՒԱԿԱՆԻ ՕՐԱՑՈՑԸ

Յաւելուածի բովանդակութիւնը.—Ա. Դպրոցական. դպրոցական տօն օրերը, ծրագիր հայոց ծխական-եկեղեցական ուսումնարանների (համառօտ). Բ. Աշխարհագրական. Կովկասը և նրա բաժանմունքները, ընդարձակ ուղեցուցա, որ ծանօթացնում է Կովկասի ու Անդրկովկասի բոլոր քաղաքների ու յայտնի տեղերի հետ և բացատրում է նրանց ծագումն ու աստիճանաբար յառաջադիմելը (50 երես). Գ. Լեզուաբանական. Բառարան եւրոպական բառերի ու ոճերի, որոնք պատահում են և կարող են պատահել մեր գրքերում և պարբերական հրատարակութիւնների մէջ՝ մանրամասն բացատրութեամբ (100 երես). Դ. Այլ և այլ. Մանկատածութիւն, բժշկական, ինչպէս յայտնի դիտակները գուշակում են մարդուս հոգեկան յատկութիւնները (դիմագուշակ), բարոյական մոքերը. „Մեղայ, Տէ՛ր“ (ոտանաւոր) և այլն։

Գինն է 20 կոպէկ. 10-ով առնողին—17 կոպէկ, 100-ով առնողին—15 կոպէկ։ 100-ով առնողը ճանապարհածախք չէ վճարում։

Կարելի է ստանալ հետևեալ հասցէներով. 1) Тифлисъ. На Авлабарѣ. Діакону Ованнесу Назарянцъ. 2) Тифлисъ. Михайловскій мостъ. Книгопродавцу Давиду Айвазову. 1—5 (ե)

Յայտարարվում է ի գիտութիւն թարգմանիչների, որ արդէն թարգմանված է ռուսերէնից „ԴԱՎԵԱՅ“ զրքոյկը։ Թ. Ստեփոյեանց։ 3—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ, մտնելով Կ. ՊՕԼԻՍ, ՍԱՄՍՈՆ և ՏՐԱՊԻԶՕՆ։

Երթևեկութիւնը չոգենաւերի 1889 թուի վերջին քառորդի համար փոխված է, սկսած հոկտեմբերի 11-ից. այդ փոփոխութիւնը վերաբերվում է Բաթումից չոգենաւի զուրս գալուն, որը նշանակված է չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ, փոխանակ հինգշաբթի օրերը։

ԲԱԹՈՒՄԻՑ ԴՈՒՐՍ ԿԸ ԳԱՆ

11	Հոկտեմբերի	չոգենաւ ‹ՄԻՆԳՐԵԼԻԱ›
25	›	› ‹ԱՐՄԷՆԻԱ›
8	Նոյեմբերի	› ‹ԱՆԱՏՕԼԻԱ›
22	›	› ‹ՄԻՆԳՐԷԼԻԱ›
6	Դեկտեմբերի	› ‹ԱՐՄԷՆԻԱ›
20	›	› ‹ԱՆԱՏՕԼԻԱ›

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին պէտք է դիմել Ընկերութեան ագենտներին.

Թիֆլիսում. պ. ԲԸՆՕԻՆ, նախկ. Արծրունու զալէրէյում, № 14.
Բաթումում. պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Նաբերէժնայում։

1—3 (և. հ.)

Дозволено цензурою, Тифлисъ 20 Ноября 1889 г. Типографія Канцеляріи Главноначч. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.